Կարգապահական գործ թիվ ԿԳ-20120

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2021 թվականի փերվարի 04-ի թիվ 246-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/144-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱԳԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ՝ նաև Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրչյանի, Տիգրան Խուրշուդյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեժլումյանի, Կարեն Սարդարյանի և Արմեն Ֆերոյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Գագիկ Նալբանդյանին (արտոնագիր՝ թիվ 365) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.07.2020թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Գագիկ Նալբանդյանը **(այսուհետ՝ նաև Փաստաբան)** 2018 թվականի հունիսից 2020թ. հունիս (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար ունի 125.000 (մեկ հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի պարտք:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 03.08.2020թ. թիվ 250-Ա/ԿԳ-20120 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել Փաստաբանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ նաև Կանոնագիրք)** 2.9.1 և 9.1.3 ենթակետերի խախտման հատկանիշներով:

Սույն կարգապահական գործը 10.08.2020թ. հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 04.02.2021թ., ժամը՝ 19:00-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, 12 սենյակ):

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Փաստաբանը բացատրություն չի ներկայացրել:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) Փաստաբանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 16.03.1999թ.: Սույն փաստը հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքով,
2) Փաստաբանն ունի 125.000 (մեկ հարյուր քսանհինգ հազար)ՀՀ դրամ գումարի չափով 2018թ. հունիսից 2020թ. հունիս (ներառյալ) ամիսներն ընկած ժամանակահատվածի համար անդամավճարի վճարման պարտավորություն: Սույն փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 28.07.2020թ. տրամադրված տեղեկանքով,
3) Փաստաբանն իր անդամավճարի պարտքը մարել է: Սույն փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 04.02.2021թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով:

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ Փաստաբանի նկատմամբ 2018-2021թթ. ընկած ժամանակահատվածում անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու հիմքով կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական վարույթը):

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները՝ Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գագիկ Նալբանդյանի նկատմամբ կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ *փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի*

ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:*

Կանոնագրքի 2.9.1. ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված նոր խմբագրությամբ Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգի **(այսուհետև նաև՝ Կարգ)** 7-րդ կետը սահմանում է՝ *փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:*

Կարգի 21-րդ կետը սահմանում է՝ *Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:*

Կարգի 17-րդ կետը սահմանում է՝ *Առաջին անգամ անդամավճար չվճարած փաստաբանի կողմից իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթով մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելը, անդամավճարի պարտքն ամբողջությամբ մարելու դեպքում, կարգապահական վարույթն ենթակա է կարճման: Փաստաբանի կողմից անդամավճար չվճարելու հիմքով հարուցված երկրորդ կամ հետագա ցանկացած կարգապահական վարույթ չի կարող կարճվել հարուցելուց հետո պարտքի մարման հիմքով, բացառությամբ այն դեպքի, երբ անդամավճարի պարտքի մարման հիմքով նախորդ կարճված վարույթի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո անցել է երեք տարի:*

Վերոնշված կանոնների վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանը ենթակա է պատասխանատվության, բացառությամբ Կարգի 17-րդ կետով սահմանված դեպքի, որի կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների պարտադիր առկայությունը՝

- ✓ անդամավճար չվճարելու հիմքով կարգապահական վարույթը պետք է հարուցված լինի առաջին անգամ կամ կարճված վարույթի որոշման ուժի մեջ մտնելու օրվանից հետո անցած լինի երեք տարի և
- ✓ մինչև Պալատի խորհրդի կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշում կայացնելն անդամավճարի պարտքը պետք է ամբողջությամբ մարված լինի:

Սույն դեպքում ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի 04.02.2021թ. տեղեկանքի համաձայն Գագիկ Նալբանդյանն իր անդամավճարի պարտքը մարել է:

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ նախկինում չի կիրառվել Պալատի Կարգի 17-րդ կետը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, Կարգի 17-րդ կետով՝

Պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Գագիկ Նալբանդյանի (արտոնագիր՝ թիվ 365) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ Պալատի խորհրդի 26.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ հաստատված նոր խմբագրությամբ «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ կարգի (Նոր խմբագրությամբ)» 17-րդ կետի հիմքով:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Գագիկ Նալբանդյանին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում բողոքարկման համար սահմանված ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Հարություն Հարությունյան

04 փետրվարի 2021թ.
թիվ ԿԳ/144-Ա
ք. Երևան